

ՄԻ. ԻՍՏՅՈՎՆԵՆ

ԵՐԳԵՐ ՈՒ ՎԵՐՔԵՐ

Ա. Դ. ԻՍԱՆԴՐԱՊՈՒ,

1898

Չկարգված

59

✓

2

2002

արթուր

59

ՅԻ. ԻՍԵՂՍԵՆ

չ

ԵՐԳԵՐ ՈՒ ՎԵՐԻԵՐ

226



ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՈՒ

ՏՊԱՐԱՆ ԳԷՈՐԳ Ս. ՍԱՆՈՅՆՈՆՅԻ

Типография К. С. Саноянца въ Александровоѣ

Биб. ул., соб. домъ.

1897

2780

1897-09-02

999-999-999

Дозволено цензурою. Тифлисъ, 2-го Сентября 1897 г.

ԵՐԳԵՐ ու ՎԷՐՔԵՐ



(4143
41)

1858

59-2001

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԻՄ ԲԼՐՈՒԼԻՆ.

— Բլբուլ, արե, ասումեմ,
Բլբուլ, արե, ասումեմ —
Բլբուլ, Հեադ խօսումեմ...

Քեզե կ'ասեմ վարդ մե սիրէ,
Սիրտ կ'ծակէ — փուշ ունի,
Մով — մանուշակ մենակ սիրէ —
Նուշ-քնքուշ է, փուշ չունի...



ԻՄ ԲԼՈՒՐՆ.

— Բլբուլ, արե, ասումեմ,
Բլբուլ, արե, ասումեմ —
Բլբուլ, Հետդ խօսումեմ...

Քեզե կ'ասեմ վարդ մե սերէ,
Սերտ կ'ծակէ — փուշ ունի,
Մով — մանուշակ մենակ սերէ —
Նուշ-քնքուշ է, փուշ չունի...

ՅԱՌՈՋԱՐԱՆԻ ՏԵՂ

Գեշերն եկաւ, գով-հովն ընկաւ,
Աստղունք լուսնին ձէն տւին,
Լուսնակն ելաւ, մով-ծովն ընկաւ,
Հաւքերն ինձի ձէն տւին,—

Ես վեր ելայ ոգի առած,
Զարկե սրտիս լարերին,—
Սիրտս խնդաց, կուրծքս թնդաց—
Եւ լարերը հարւեցին...

—Մենակ սիրոյ լարը մնաց
Սրտիս անհաւն խորքերում,
Մենակ սիրոյ երգը շողաց
Կեանքիս ամէն ծալքերում:

1895 թ. 5 Օգոստոսի:
Արգինա:

ԻՄ ՓԼԻՐԻՆ

(Շիրակի Բալադաներէն)

Կէս-գեշերն գետն ափին
Ես նստած եմ սերավառ,
Գետն հոտումէ — և հոտանքն
Ես նայում եմ միալար:
—Ո՞վ է խաղաղ մէջ գեշերն
Քրած գետը վրդովում,
Ալիքները խփում ժայռին,—
Մերուկ ժոյռը լանսում:
—Ո՞վ է աստղոտ, գով գեշերն
Լուսնի շողով զարդարում,
Նուշան-կրճ քին, սև մազերն
Գոհար-ցողեր սրսկում:
—Ո՞վ է չքնաղ, բարի լուսին
Մաղիկները համբուրում,
Մշուշային փրփուրի մէջ
Արշալոյսին ողջունում:

ՅԱՌԱՋԱՐԱՆԻ ՏԵՂ

Գիշերն եկաւ, գով-հովն ընկաւ,
Աստղունք լուսնին ձէն տւին.
Լուսնակն ելաւ, մով-ծովն ընկաւ,
Հաւքերն ինձի ձէն տւին,—

Ես վեր ելայ ոգի առած,
Զարկի սրտիս լարերին, —
Սիրտս խնդաց, հուրծքս թնդաց —
Եւ լարերը հարեցին...

— Մենակ սիրոյ լարը մնաց
Սրտիս անհուն խորքերում,
Մենակ սիրոյ երգը շողաց
Կեանքիս ամէն ծալքերում:

1895 թ. 5 Օգոստոսի:
Արզւնա:

ԻՄ ՓԼՔԻՆ

(Շիրակի Բալլադներէն)

Կէս-գիշերին գետի ափին
Ես նստած եմ սիրավառ,
Գեան հոտով — և հոտանքին
Ես նայում եմ միալար:
— Ո՞վ է խաղաղ մէջ-գիշերին
Քնած գետը վրդովում,
Ալիքները խփում ժայռին, —
Ծերուկ ժայռը լանում:
— Ո՞վ է աստղոտ, զով գիշերին
Լուսնի շողով զարդարում,
Շուշան-կրճքին, սև մաղերին
Գոհար-ցողեր սրսկում:
— Ո՞վ է չքնաղ, բարի լուսին
Ծաղիկները համբուրում,
Մշուշային փրփուրի մէջ
Արշալույսին ողջունում:

— Նա հեզ գետի լուռ Փէրին է,
Ցնորքներն սիրելին.

— Նա իմ սրտի գեցուհին է,
Վառ երգերն նազելին:

Կէս-գիշերին գետի ափին
Նս նստած եմ քարացած.
Գետն հոսումէ—և հոսանքին
Նս նայումեմ շարած...

1892. 6 Յունիսի
Արզենա:

ՍԻՐՈՅ ՅՈՒՇԵՐԻՑ

ՍՈՐՈՑ ՅՈՒՇԵՐԻՑ.

Անտուն գեշերներ,
Անքուն գեշերներ,
Քուրիկ, քեզ համար,
Քո սիրով աչրած—
Ես շնտ անցրի,
Ես շնտ տանջեցի.,.

I.

Ծաղիկ էի նորաբողբոջ
Սարի լանջում—երկնի տակ,
Ինձ դիւթում էր առի խոխոջ,
Ինձ սղջունում արեգակ:
Դիշերները աստղ ու լուսին
Քնից կտրած ու ապուշ—
Ծաղիկս սիրուց երգում էին
Օրօր անգորր ու անուշ:

Գառների հետ լուսադէմին
 Եկար սարը, ջանն աղջիկ,
 Ինձ քաղեցիր, դըրը անգին —
 —Կրճքիդ վերայ գեղեցիկ.
 —Այնտեղ, այնտեղ ես ապրեցայ
 Քու արցունքով բերեղիկ,
 Բախտը ժպտաց քեզ, սևաչեան,
 Ես չորացայ .. ան, աղջիկ ..

1892. 9 Մարտի
 Ս. Էջմիածին.

II.

Սիրտ իմ, սպասիր, գուցէ արշալույս
 Ողջունէ երկինք, գուցէ մանուշակ
 Ծանր տայ բերեղիներ, գուցէ մի նոր լոյս
 Հալածէ մութը, գուցէ չաղթանակ
 Տանիս կուռի մէջ — մի յուսահատուիր:
 Ապրիմ մինչ կայ կեանք, մինչ նորոգ յոյսի
 Կախարդ հորեղոն... Սիրտ իմ վշտակիր,
 Ինչո՞ւ ես հեծում, միթէ ամեհի
 Օճն է ճնշում քեզ — անյոյս կասկածը,
 Մաշող ճանձրոյթը... միթէ խորտակեց
 Անքնինն ուժը — սրբազան սէրը...
 — Տանջւիր, յուսան...

1892. 4. Մայիսի
 Արէքսանդրապոլ:

III.

Կնւզես լինիմ վշտի ցօղեր
 Աչերիդ մէջ շող — կայծեմ,
 Լուռ գեշերուայ անուշ հովեր,
 Փունջ-ճամբուդ փայփայլեմ:

Կնւզես լինիմ վարդ — նազելի
 Կրճքիդ վրայ վառվռիմ,
 Արշալույսի շողեր — ոսկի
 Դէմքիդ վրայ փայլիլիմ:

Կնւզես լինիմ ծառ ու ծաղիկ,
 Քեզ գրկումս նինջ սփռեմ,
 Թալուկ սուտեր, թովիչ թռչնիկ,
 Օրօր ասեմ, օրօրեմ:

Ի՞նչ որ ցանկաստ, կնւզես լինիմ,
 Լինիմ երկինք ու երկիր,
 Ծով, ժայռ, աղբւլը, արև, լուսին
 Լինիմ — մեայն ինձ սիրելը...

1892. 21 Յուլիսի
 Ս. Հառիճի վաք.

IV.

— Պարզիայ գեշեր...
 Աստղերն երկնքում լուռ պսպղումէն,
 Լուսնի շղերը գեպելեն սարի
 Զիւնոտ կողերին — կողերը ցօլում,
 Պէճին են տալիս:

Յրտաշունչ քամին
 Թւերը փռած փնջումէ, թռչում,
 Սառած երկիրը ճաքում — ճաքճքում,
 Ձեան հատիկներով քարափի կուրծքը
 Ծեծում ու ծեծկում...

Անծայր ճանապարհ...
 Առաջ եմ գնում — ուր — էս չ'գիտեմ.

Սառնոց ու ձմեռ.

Առաջ եմ գնում անչոյս, անընկեր,
 Քամի ու գիշեր,
 — Ախ, եթէ չանկարճ չոյսս շողջողար —,
 Նա ինձ ողջունէր..

1892 թ. 13 Գեկտեմբերի.

Թեֆլիս:

Վ.

Շուշան աղջիկ, քու գերին եմ,
 Կալ ու կապւած անշղթայ,
 Սիրտս վառւաւ սիրուդ բոցէն,
 Պապակ-ճարաւ էրեւցայ:

Քու կարօտով սիրտս լիկ-լիք,
 Ես հալ ու մաշ, թեւ դառայ,
 Օրեր անցան — տարիք անցան,
 Շւաքդ եղայ, ման եկայ:

Էս քարի պէս ժէռ է հոգիդ,
 Էս այրի պէս լուռ ու մոլթ,
 Էլրեց, մոխիր դառաւ գերիդ,
 — Ախ, նուշիկ ջան, ախ անդուլթ...

1892 թ. 6 Յունիսի

Կարս:

ՎԻ.

Մի խոտանար ծագել նորէն
 Վառ արշալոյս իմ սրտում —
 Անապատում վաղուցւանէն
 Մութ մառադուխ է տերում...

Արշալոյսի շողն ու ցօղը
 Հեզ շուշանին են կարօտ,
 Իսկ խաւարի մռայլ քօղը
 Կրճքին դատարկ ու ցրտոտ...

— Սերտս արդէն մոռցած շերեմ
 Արդէն դատարկ օրօրան, —
 Կը խարխափեմ, թնոյ, ընկեր իմ,
 Այսպէս հասնիմ գերեզման..

1892 թ. 15 Ապրիլի:

Ս. Էջմիածին:

VII.

Ես ունէի մի նուան ծառ,
 Մաղկած ալւալ նուներով,
 Բայց միս, տօթը հուր-բոցավառ
 Խարկեց ծառըս նուներով:

Ես ունէի սև-ժայռի տակ
 Մաքուր աղբուր մեղրահոտ,
 Բայց արեւ բարկ ու կրակ
 Զորցուց աղբուրս միս, ափսոս:
 Լիքը սիրով, վառ չոյսերով
 Սիրտ'մ ունէի անարատ,
 Բայց, Նուշան ջան, քու սուտ-սիրով
 Սիրտս դարձրիր անապատ...

1892. Թ. 3 Սեպտեմ.
 Դիլիճան.

VIII.

Մութը գրկած գետ ու գետին,
 Հով ու ալիք կ'ծփան,
 Երկինք գրկած աստղ ու լուսին,
 Լուռ կ'ննջէ Արփա—չայն...

Սերտս, սերտս թոյլ կ'զարկէ,
 Սէր ու երգեր էլ չկան,
 Նոր էր ծլեր-արև սիրեց,
 Արև—աչեր էլ չկան...

Վառ աստղերը երկնուց ընկան,
 Վարդ ու շուշան թառամեց,
 Ախ, եմ կեանքս, անուշ կեանքս
 Կտոր-կտոր փշուեց...

Հովն ու ալիք կուզան-կերթան,
 Ցաւած սիրտս կ'ընչեն,
 Ու եմ սիրուս մըմունջներէն
 Տխուր երգեր կ'հչիւսեն...

1895 Թ. 12 Սեպտեմբերի,
 Ս. Հոռոմնոսի վանք.

IX.

Մթթէ պիտի թուռմին, թօշնին
 Վարդ ու շուշան ինկաբոցը,
 Անգորը լուեն թուշուններ
 Վառ մեղեդին,
 Ակն-աղբուր:
 Մթթէ պիտի, չքնաղ ընկեր,
 Կեանքի անուշ չոյզերեց
 Կուրծքդ հանդիս-լուռ դադարիս
 Սառն ու անկեանք
 Երմի ասկ...

Մթթէ պիտի փոշի դառնան
 Այդ աչերդ կենսավառ,
 Ուր շողումեն չոյս ու տենչեր,—

59-2007

296

(4143)



Սիրոյ աստղեր
Ինձ համար:

Մթթէ պետի վառ ժպտոք
Եւ արցունքիդ ծիածան,
Ինչպէս երազ, անդարձ մարին
Խոնաւ հոգում
Յաւիտեան:

Օ, ինչ—մթթէ, մթթէ, հոգեակ,
Պիտի անհետ մոռացելս,
Ձիւնի շերտեր վրադ դիզւին,
Փոշիդ տանի
Յուրա քամին..

1892 թ. 5 Մայիսի.
Ղաղարապատ գիւղ:

Վ.

Տիեզերքի պերճ հիւսւածքն եմ,
Իմ մէջ երկինքն է երգում,
Բռնկում է սիրոյ հրդեհն,
Վշտի հեղեղն աղմկում..

Եթէ հոգուս ճոխ երգերեց
Մե մեզմ հնչեւն, նապելիս,
Քու ահանջը միայն շոյէ,—
Հիացքնեցով կ'դիւթւիս:

Եթէ սիրուս վառ հրդեհեց
Մի նսեմ կայծ, սեպնայ,
Լուս սրտումդ միայն շողայ,—
Բուռն յոյզերով կ'այրւի:

Եթէ վշտիս ջերմ հեղեղեց
Մի ջինջ կաթիլ, սերելիս,
Ձքնազ կրծքիդ միայն ծորէ,—
Սե վշտերով կ'լցւիս..

Տիեզերքի պերճ հիւսւածքն եմ,—
Իմ մէջ երկինքն է երգում,
Բռնկում է սիրոյ հրդեհն,
Վշտի հեղեղն աղմկում..

1893 թ. 28 Օգոստոսի.
Վեհնա

ՆՈՒՆԻ ՄԱՅՐՈՒԿԻՍ.

Հայրենիքէս Հեռացեր եմ,
Խեղճ պանտուխտ եմ —տուն չունիմ.
Ազիզ մօրեցս բաժանուեր եմ.
Տխուր —տրտու՛մ, քուն չունիմ:

Սարից հուգաք, նշխուն հաւքեր,
Ա՛խ, իմ մօրս տեսեր չէք.
Ծովից հուգաք, մարմանդ հովեր,
Ա՛խր, բարե բերեր չէք...

Հաւք ու հովեր եկան հշտիս —
Անձէն եկան ու անցան.
Պապակ —սրտիս, փափաք-սրտիս
Անխօս դիպան ու անցան:

Ախ, քու տեսքին, անուշ լեզւին
Կարօտցեր եմ, մայրիկ ջան,
Երնէի, երնէի, երազ լինիմ,
Թունիմ մօտդ, մայրիկ ջան:

Երբ քունդ գայ, լուռ գիշերով
Հոգիդ գրիեմ, համբուր տամ —
Սրտիդ հպնիմ վառ-կարօտով,
Լամ ու խնդամ, մայրիկ ջան...

ԱԼԱԳԵԱԶԻ ՄԱՆԻՆԵՐԻՑ

ԱԼԱԳԵԱԶԻ ՄԱՆԻՆԵՐԻՑ

(Ժողովրդ. հայրենիք)

Ախ, աղջիկ, արտի մեջին,
Ջան աղջիկ, վարդի մեջին,
Եթ տարի քեզ սիրեր եմ —
Սրտիս սե դարդի մեջին:

II.

Էս գեղեր — ամպհով գեղեր —
Կարօտ աչքիս քուն չի գաչ,
Էս դարդեր, մըմուռ-դարդեր,
Իմ սե սրտէս վազ չեն գաչ...

Շնատ եմ լացեր, իմ աչերէն
Քունը վաղուց է փակեր,
Շնատ եմ լացեր, ետը, քո ձեռքէն,
Սիրտս մենմ ծով է գառեր:

Անուշ աղբէր, քուն չունիս,
Գարդլու աղբէր, տուն չունիս,
Աքար-աշխարհ ման կուգաս —
Գէօզալ սրտում քուն չունիս:

ԱՆԳՆԵՋԻ ՄԵՆԻՆԵՐԻՑ

(Ժողովրդ. Գաբիւնէր)

Այս, աղջիկ, արտի մեջին,
Զան աղջիկ, վարդի մեջին,
Եւթ տարի քեզ սերեր եմ —
Սրտիս սև դարդի մեջին:

I.

Էս գեղեր—ամպհով գեղեր—
Կարօտ աչքիս քուն չի գայ,
Էս դարդեր, մըմուռ-դարդեր,
Իմ սև սրտէս վաղ չեն գայ...

Շատ եմ լացեր, իմ աչերէն
Քունը վաղուց է փախեր,
Շատ եմ լացեր, ետր, քու ձեռքէն,
Սիրաս մենծ ծով է դառեր:

Անուշ աղբէր, քուն չունիս,
Գարդլու աղբէր, տուն չունիս,
Արար-աշխարհ ման կուգաս—
Գէօզալ սրտում քուն չունիս:

II.

Աղօթրանէն արև ցոլաց,
 Կապուտ սարէն Հովն եկաւ,
 Խեղճ բլբուլի երգը զնգաց,
 Շաղաղ-վարդի Հոտն ընկաւ:

Գու նստերես աղբրա-ակին,
 Շաղը ծամերդ կ'Թըջէ.
 Ալ-Թշերիդ, լալ-շըԹերիդ
 Շաղվը ջուրը կ'պաչէ:

Շուխիկ-աղջիկ, չեմ գեմանայ,
 Սիրտս կառնի ու կուտայ,
 Նուռ-պաչ կուղեմ, նուշ-պաչ կուղեմ,
 Աշխարք ձէնիս ձէն կուտայ:

III.

Փրփուր կտրած առուն կուգայ,
 Քար-քարափին ձէն տալով,
 Զարօս սարէն ձորը կուգայ,
 Միլ-ճաղկունանց շողք տալով.

Յետ գնացէք, քար ու քոլեր,
 Վանդեր, ճամպայ ցուց տէք, —
 Նշխուն-Ջարօն ինձ մօտ գայ.

Լեռ քարափներ, մէկդի քաշէք.
 Առն, փէշերդ Թօփ արա —
 Թողէք Ջարօս գերիս գայ:

IV.

Էս սարերի սիրուն լալէն,
 Եղնիկ, ասան, ուր է, չ'կայ.
 Խաբրիկ կուզեմ քարէն, քոլէն,
 Ո՛ւր տեղ գնաց, ուր է, չ'կայ.

Աստղի ցուքով գեշերն իջաւ,
 Թո՛ղ տո՛ւր, ետը ջան, արօրը,
 Գար ու դարափ խոր քուն մասն,
 Հօտը իջաւ մութ ձորը.

Հովը բարանի կ'ջնկէնկայ,
 Էրւած սիրտդ Հովին տուր,
 Արի գերիս-քունդ կուգայ —
 Սրտիդ-գարդիդ գաղար տո՛ւր:

V.

Քու աչերդ զուլալ աղբուր,
 Ուրտից սէրդ կ'բղխէ,
 Քանց զով երկինք, ջննջ ու մաքուր,
 Ա՛խ, սիրտս սիրովդ պապակ է:

Քար ու քարափ քրտնեւ են,
 Զրեւ կ'կլանն, վանդ-վառման,
 Հովերն եկան, Հաւքեր կ'երգեն,
 Սիրտս — գարնն, սէրս-էրման.

Սարէն կուգայ անուշ քամի,
 Սէլ ու արօտ իրար կանի,
 Թոյ Հուսերդ քանդեմ, Զարօս,
 Մէջքիդ վրայ Թիւ-Թիւ անի:

VI.

Արևի պէս, գեօղալ Զարօ,
 Շափաղ տալով դուրս ելար,
 Ին մութ ձորին—իմ խոր սրտին
 Շողեր տալով դուրս ելար:

Ալ-վարդերը կրծքիդ նստան,
 Յօղերն իջան օտքերիդ,
 Զով Հովերը ծամերդ տարան...
 Մեռնիմ ծոյլ-ծոյլ աչերիդ...

Արև գիբիս, մարմալ աղջիկ,
 Ալամ-աշխարհ լծոյ, արև,
 Նազ մի էրա, նստէ մօտիկ—
 Անտէր սրտից վազն արի...

VII.

Երազիս մէջ երկինք տեսայ
 Աղօթարան ցոլալիս —
 Որսորդի Հետ եարիս տեսայ
 Արա ու արօտ ման դալիս:

Եարս ձեռքին ծաղկունք ունէր,
 Վարդը որսորդին տւեց.
 —Եարաբ չըլնի, անուշ Հովեր,
 Եարս սիրու խօսք տւեց:

Որսորդը Հմայել ունէր,
 Եարիս վզէն կախ արաւ.
 —Եարաբ չըլնի, զովիկ Հովեր,
 Մարալ եարիս որս արաւ...

VIII.

Ո՛վ կեանք ունի, դարդ էլ ունի,
 Գարդին դարման եար էլ ունի.
 Մենակ ես եմ քամբաղդ ծներ—
 Սիրտս դարդոտ ու ճար չունի.

Ո՛վ սէր ունի, եար էլ ունի,
 Նաղան սրտում տեղ էլ ունի.
 Մենակ ես եմ սև օր-ծնէր,
 Սէրս կուլայ ու բուն չունի. .

Ծէզը աուաւ դար ու դուրան,
 Ազիզ մէրիկ, դուռը բաց.
 Քու որդին եմ, խոցւած կուգամ,
 Անո՛ւշ մէրիկ, —գիբիդ բաց...

1895 Թ. Յուլիս:
 Մանտաշի ձորերում ու ջրերում.

ՆԻԼԻ ԲՆԿԵՐԻՍ

—Այս ծառի տակ, զով առւի մօտ,
Այս Ժայռի տակ, մութ այրի մօտ,
Արշալոյսի շողերու հետ—
Ես քեզ տեսայ, իմ ընկեր.

—Մենք անձանօթ, հեռու տեղերէն, իրար այս-
տեղ հանդիպանք. դու նայեցիր մեզմ հայեացքով.
Ես քեզ բարև ասացի:

— Ու մենք նստանք քարի վրէն, ծառը անոնչ
խշխշաց, այրեց փչեց մարմանդ քամին, արևն ելաւ—
ոսկէծին:

—Մենք խօսեցինք հին օրերէն, մեր ճամբէքէն ու
բախտէն... ու մեր սրտերն մենք գտանք աստղերու
պէս—անչայտ, հեռու, իրար նման...

—Սերեցինք իրար,
Գրկեցինք իրար,
Ու ընկեր դառանք
Աստղերու նման:

—Ահն, ընկեր, կ'իմեմ առւի մաքուր ջրէն քու
կենացը. Թոյ մենք միշտ ընկեր լինինք. իրարուց
հեռու, իրար սրտի մէջ: Առ համբուրս, իմ ընկեր,
Խմենք մեր կենացը...

ԱՍՏՂԻԿ ՈՒ ԾԱՂԻԿ

ԱՍՏՂԻԿ ՈՒ ԾԱԳՈՎ

Գուն հոգես ես, հոգես կուգես,
Չէ—չըսեմ, հանեմ, տամ քեզ,
Վախնամ, թէ աչերս ուզես,
Եւ թնչով աշեմ ես քեզ:

I.

Յնչա է օրը—բնւք ու խաւար,
Քամին շաչում, շառաչում.

Ա.խ, իմ սիրտս—խեղճ, վշտահանք,
Տխուր, մըմունջ, լնւռ ու մունջ:

Լուեց քամին. շաղով, շաղով
Շողաց արև, փայլեց օր—,
Իսկ դուն կըբ պետ՞ ժպտաս ահամպ,
Իմ խղճուկ սիրտ վերաւոր...

1892 թ 4. Հոկտեմբերի:

Ս. Եջմեաճի:

II.

Ա՛խ, ալ վարդէ, սիրոյ վարդէ
Չոր-փշերը մնացին...

Է՛հ, փշերը մատաղ սիրտս
Քրքրեցին ու կերան,
Վարմիր-կանանչ իմ օրերը
Սիրոյ սգով սեպցան...

Ա՛խ, ափսոս իմ գարուն-կեանքիս,
Սուր փշերը մնացին...

1897 թ. 23 Յունիսի:
Աղէքսանդրապոլ:

III.

— Սիրտս երկինք է...

Ամէն արարած

Աստղ ունի այնտեղ—

Խորշ ունի այնտեղ:

— Սիրտս երկինք է,

Բո՛յր կուտայ ծաղկին,

Սէր կուտայ կոյսին,

Կեանք կուտայ անկեանք

Չոր անապատին—

Ամայի սրտին...

— Սիրտս երկինք է...

1893 թ. 4 Փետրւարի
Թիֆլիս:

IV.

Տօթը աչրեց վարդն — անուշ,

Նա թառամեց, մխ, ափսոս,

Վիշտը ճնշեց սիրտս քնքո՛ւշ,

Նա խորտակեց, վախ, ափսոս...

ԱՀն, անձրև, թովիչ գեփիւ ու,

Վարդը փթթեց ու բուրեց,

Բայց մխ, սիրտս, սիրտս տխուր,

Նրբէք ուրախ չ'ըսեսցե՛ք...

1891 թ. 3 Մայիսի:
Վաղարապատ գետի:

V.

Երնէկ, ես էլ, ալ-թիթեռնե՛ր,

Ձեզ պէս թռնիմ վա՛ր ու վե՛ր—

Չքնաղ— ծաղկից ծաղիկ-ցօղուն,

Ոսկի — ցուքում, աստղ-ցօղում:

Սիրտս բանամ դէմ գով-ծովուն,

Վիշտս տանի Հովը ծովուն.

— Ձեզ Հեռ երգեմ կեանքի երգը,

Սիրեմ ինձ ու իմ կեանքը...

1897 թ. 4 Յուլիսի:
Աղէքսանդրապոլ:

V I.

Բալէս ունի Հնդու-մաթայ,
 Ոսկէ-օրօցք, ասլաս-ճածկօցք.
 Պուպնւշ-դարդար, նշխուն բալնչ,
 Պաճիկ արնս. օր, օր, լալմչ.

Նանիկ արն—նանի, դմր—դմր
 Աչք ու ունքդ—աստղ ու կամար..

Յորեկ եղաւ—ոչխարն եկաւ,
 Աղիկ բալէս քնած մնաց,
 Վեր էլ, բալայ, աննշ ճըղն,
 Տիտիկ արն, ճիճիկ մամն,
 Պիճիկ—միճիկ տոտիկ արն..

Հոպպն, բալայ, քունդ անուշ,
 Շաքար ու ննւշ, թնւշ աննւշ,
 Զան Տիրածին, Ասաւածածին,
 Չար աչքէն, չարօցքէն
 Ազատ պահէս իմ բալէս:

1892 թ. 12 Մարտի.
 Աղէքսանդրապօլ:

V II.

Հոգի կուտամ, Հոգի տնւր ինձ,
 Իմ նազանի նազէլի.
 Սիրտս - գիշեր, սէրդ—վառ անտղ,
 Թնդ շողշողայ նա աչնտեղ ..
 Սիրտս—սե մրտ, սէրդ—ալ-վմրդ,
 Ա խ, թնդ ճողկի նա աչնտեղ ..

1892 թ. 14 Յունարի:
 Իզգիլ:

V III.

Ա խ, իմ սիրտս, վմի, իմ սիրտս,
 Օրուց-մանկուց Հալաւ-մաշաւ.

Աշխարհ մտայ, վարդ սիրեցի,
 Անտէր վարդը սիրտս ծակեց.
 Մեհակ ապրայ, արուն լացի,
 Աստղս էլ երկնում թառամեց:
 —Մով, սիրտդ բնց—բնց խորն ու լնչն,
 Շնտ դատրածեմ, ճոցդ կուգամ ..

1897 թ. 28 Յունիսի:
 Աղէքսանդրապօլ:

IX.

Դիշերն եկաւ—աստղունքն ելան,
 Լուսնահն աղօտ շողշողաց,
 Ծաղկունքն ամէն նոր քուն մտան—
 Ամպի ցօղով, լուսնի շողով
 Հարհանդ-մարմանդ քուն մտան:

—Դուք էլ քնէք, ոսկի-աստղունք,
 Վարդ ու բլբուլ, քուն եղէք,
 Ծովեր, քուն մտէք, Հովեր, քուն մտէք,
 Անուշ-անուշ քուն եղէք.

—Իմ սար-դարդեր, սխ, ծով-ցաւեր,
 Դուք էլ մուշ-մուշ քուն եղէք...

1897 թ. 18 Մայիսի.

Աղէքսանդրապօլ:

X.

Ես երգել էմ—երկնի օրդի,
 Ես դանձ չունիմ—լեռ ու բեռ,
 Ես սիրումեմ ծաղիկ, անձրիկ,
 Ծաղիկ բուրմունք, կոչսի սէր,
 Ես սիրումեմ մրմունջ-արտունջ,
 Տանջւած սրտի երգ ու վերք...

1893 թ. 3 Ապրիլի.

Աղէքսանդրապօլ:

ԲԻՆԳԵՍԻ.

(Հայ. Ժողովր. սաստիկ).

Շընկշնկալով Հովն է փչում
 Ձով Բինգետլի լանջերից,
 Գոչդոչալով ուղխն է վազում
 Խոր Բինգետլի ձորերից:

Հօրուտ-մօրուտն ճաղկանց ծովում
 Բուրումէ բոչր ու երգեր,
 Շուխիկ-Հիւրին լըճի ծոցում
 Լողանումէ անընկեր:

Հրեշտակը երկրի կեանքից
 Դիւթւած, ապշած լիւլի՛
 Վալը է ընկնում աստղոտ երկնից—
 Ընկնում գերկը Բինգետլի:


Փէրուգ-երկինքն Հրեշտակին
 Կարեկցումէ—ցաւակցում,
 — „ Ա՛խ, ափսոս քո անմահ կեանքին,
 Որ չը փալցեց Իրախտում... „

Բիւրեղ լըճից ցօղն է ելնում
 Ծիածանի ժրպիտով,
 Ծաղիկներն ջինջ բոզբոջում
 Հանգ է աւնում շողալով:

Զմբուխա — երկիրն Հրեշտակին
Ողջունում է — փաղաքում,
— «Ա՛խ, երնէ՛ղ քո մատաղ կեանքին,
Որ պիտ ծաղկի Բինդեօլում»...

Վառ անուրջում ուղին է մնչում,—
Ծփում են սէզ ու արօտ.
Բլբուլներէ Հոյւքն է շնչում,—
Շնչում է սէր ու կարօտ...
Անսուշ-անսուշ Հովն է փչում
Զող Բինդեօլի լանջերից,
Ողոր-մողոր ուղին է փախչում
Խոր Բինդեօլի ձորերից...

1893 թ, 29 Յուլիսի
Վիեննա:



ԻՄ ՕՐԱԳՐԻՑ.

ԻՄ ՕՐԱԳԻՐՑ.

—Փողովորդին օտար,
Բայց և նրան օգտակար —
Գնումեմ ես իմ ճամպով
Նրբեմն սրև, երբեմն ամպ,
Բայց միշտ նրա վրայով..

Ֆրեբեկ Նեշե.

I.

Փշէ— պտաւը ճախտիս կ'դնեմ
Ու ջինջ սրտով ամբօխի մէջ,
Ու վեհ մտքերով նրա վրէն
Կը թափառեմ սլօք-մոլոր
Նրկրի բոլոր ոլորտում..,
—Նւ թնշն է իմ նպատակը, —
Աստղոտ, վսեմ ապագան,
Որ վնու, պայծառ կ'շողայ
Պղտոր կեանքի ափերէն
Խորին, մթին հեռում:

1895 թ. 10 Յունիսի.

Վարշաւա:

II.

Հեռու արևերում միաքս թափառեց
 Ազատ ու մենակ՝ թևերս փռած.
 Վայրենի ժպիտան, մութ-մուսլ կնճիւն,
 Ինչպէս սոււերներ, մտքիս հետ ընկած:
 Հեռու արևերում, ժաշուներ կրծքին
 Շաչումէր, մոնչում կստաղի ծովը
 Եւ հպարտ սարեց շնկչնկում հովը
 Մուսլ ճակատիս:
 Այնտեղ անտառը լերը խշռումէր
 Հին—հին դարերի, գալար աղբերի
 Շքեղ անցքերեց.
 Այնտեղ ցլումէր լաղւարթ երկինքը,
 Ջւարթ երկնքում—հեռու արևերում
 Հոգիս վառւումէր—բոցերի ծով էր...
 Այնտեղ երգեցի եմ վեհ երգերը,
 Որ աստղերի պէս շաղէե տալիս
 Հեռու արևերում...
 —Եւ ստեղծեցի մի չքնաղ աշխարհ,
 Հզօր արեգեքը, ուր խորն ու վսեմն,
 Ամուր—մաքսւրը իշխում, վառւումեն.
 —Այդպէս երգեցի, հեռու արևերում
 Մտքիս թուխքով թևերս փռած
 Ազատ ու մենակ...

1897 թ. 22 Յուլիս.
 Հասիձ,

III.

Պայծառ-լուսնի շուշան-փոշին
 Մաղեց հեզ գետի վրայ.
 Մեղմիկ խշապ ցորեն—ցողուն.
 —Սիրաս անդորր կ'ծփայ...
 Աւուկները նազմն—ճածմն,
 Տերևները կ'մնչան,
 Ծիտ ու ծիծեռ ճուղքի վրան
 Մեղմ երազում կ'ննջան...
 Լուռ կ'ծորէ աստղը շողեր
 Ու ծղրիտը կ'ծղրայ,
 Քամին կ'երգէ գաղտնի երգեր—
 —Միտքս հեռու կ'սլանայ...
 Լուսնակն անցաւ.—մութը մթին
 Մաղեց հեզ գետի վրայ...
 Ծանր խշապ լացող-ուկն.
 —Սիրտս տխուր կ'հեկայ ..

1895 թ. 14 Սեպտեմբերի.
 Անի:

IV.

...— Բայց ես ոգի եմ...
 Սուրները կ'սոսափին
 Լուռ ու անդորր գիշերին,
 Մտքերն հոգումս կ'մըրրին—
 Մտքերս անափ ու անչափ..

Բայց ահա հեռում

Մէջը մեկնաւ գետէն գետին,
Շողքը առաւ հուրձքն ամպին—
Շողքը ալ վարդ ու սկիւր .

...—Բայց ես հրդեհ եմ.

Գառուկ աստղերն, թալուկ լուսինն
Վառ փոշու մէջ հալուածեն
Լեռները լուռ նիրհումեն.

...—Բայց ես ցնորք եմ.

Թռնումեմ հեռուն,
Ոտքիս տակ առուն խոխոջ հուտանց,
Սերտս, սիրտս բողբոջ հուտանց,

...—Ախ, ի՞նչ վսեմ եմ —

Երկինքն—լազարթ, երկինքն—լաջլարդ,
Լեռ, ձոր—թուխ, մութ,
Ծոփերն—կապուտ .

Ծիածանը—շաւաղ, շափանդ,

...—Ախ, ի՞նչ չքնաղ եմ—

Աստղերն—զլարթ, Աստղիկն—ալ վարդ,
Մէջը—փրփուր, ծէգը—պուրպուր,
Երգը—անուշ, վէրքը—քնքուշ,
Աչերն—ճոփ, ծաւիկ—մաւիկ...

—Բայց ես թափառել կուզեմ,

—Բայց ես արտասուել կուզեմ..

1897 թ. 14 Մարտի.

Երևան.

V.

Շղարը—ամպերն երկինքն առան,
Լուսնակն աղօտ կ'ըողայ,
Լուկի-ճահճում հանդարդ-մարմանդ
Նուրը եղէգնը կ'ըողայ.

Արագելը—մենակ ու լուռ
Եղէգնի մօտ կ'ըողայ,
Կ'մտորէ՝—խոր ու տխուր,—
Ճահճին նուազ կ'ըողայ..

Մուսլ-ափին մենակ նստած
Սիրտս անուշ կ'ըթախմի...
Ու անուրջում միտքս թաղած
Քունն աչերիս կ'հանգչի...

1895 թ. 29 Յունիսի:

Անի:

VI.

Բնիկը, միշտ չառանջ,
Մի չուսահատւիւր,
Փոթորիկի դիմաց—
Ծով—անապատում,
Անչաղթ հաւատով
Կուլիւր ու տանջւիւր,

Թող հոգեղ հանգչի

Կատաղի կուռում...

— Ընկեր, միշտ չառանջ,

Մե յուսահատուիւր,—

Շողումէ յոյսը

Վառ հորիզոնում...

1893 թ. 21 Յունիսի:

Աւ ծովի վրայ:

VII.

Անհուն երկնում ջինջ աստղերը

Գլխեմ, ինձ շատ են սիրում,

Վարդ — ամպերում արշալոյսը

Ամէնից շուտ ինձ է գրկում.

Յս էլ, ես էլ ձեզ իմ սրտում

Գրկած, պատած պաշտումեմ,

Գուք իմ սէրն էք, իմ ընկերը,

Յս ձեր երգող շողիկն եմ:

— Ախ, մենք շատ խոր ենք,

Շատ բարձր ու պայծառ

Յւ մեզ համար

Երբէք, երբէք մահ չ'կայ...

1895 թ. 13 Յունիսի:

Կիւ:

VIII.

Մայրեկ, հիւանդ եմ, սիրաս քրքրած,
Տես, սրբան խորն են հոգուս վերքերը—

Արնոտ ու խոցոտ.

Մեթէ կարողես վերքերս բուժել,

Որ մեծ տիեզերքի, հսկայ վերքերի

Կաթիլներեցն են...

Մայրեկ, հիւանդ եմ երկրքի ցաւով.

Տես, թնչպէս դառն երգումեմ երգեր՝

Անհուն վշտերի, տանջւած մտքերի.

Մեթէ կարողես երգերս մարել,

Որ մեծ տիեզերքի հսկայ վերքերի

Յաւն ու կսկիծն է...

Ախ, թող, մայրեկ իմ, վերքերս վառւին,

Թող ես մըմնջամ, անոյցս մորմոքիմ,

Ախ, դու չես կարող խեղճ սրբուդ կեանք տալ

Ա.փսոս, չես կարող արեւի բոցը,

Աստղերի շողքը, կայծակի թափը

Հոգուս մէջ ձգել—կեանք տալ իմ կեանքին:

Երբէք չես կարող ջնջել ու փշրել

Երկրքն ու երկիր—իմ մեծ վերքերը՝

Արնոտ ու խոցոտ:

Մայրեկ, իմ մայրեկ,—

Թող ես թափառեմ երկրի ուրբտում,

Ամբոխի վրայ, ուրախանի պէս,

Ճակտիս կնձիւններ, վշտի սև ամպեր,

Աչերու մս—արցունք, ձանձրոյ թը— շըթնիս,
Մենակ ու մռայլ թափառեմ խոժող,
Որպէսզի միաքս էլ անդերջ թափառէ
Մինչև տիեզերքն հեռու եզերքը...
Ախ հեռու եզերք, սը չ'կնչ .. չ'կնչ...
Թո՛ղ միայն աչնտեղ—աստղերն ցանցում,
Լսեմ լռու թեան խոր, լսչն երգերը,
Ու ես մտատանջ, Հպարտ ու մենակ
Արտառեմ լռիկ ու չաւերժ խորհեմ,
Ու չաւերժ խոկամ.

—...Մայրիկ, հիւանդ եմ...

1895 թ. 13 Մայիսի
Բերլին

ԴԱՏՐՈՒԻՆ ԱՇՈՒՂԻ

ԽԱՂԵՐԻՅ ՈՒ ԲԱՅԱԹԻՆԵՐԻՅ

ԳՆՏՐՎՈՒՆ ԱՅՈՒՂԻ

ԽԱՂԵՐԻՅ ՈՒ ԲԱՅԱԹԻՆԵՐԻՅ

— Բացաճ վարդը մե սերէ,
Որ դայ կրծքեդ ու թուռմե,
Կոկոն-վարդը սերէ —
Որ դայ կրծքեդ ու բացւի:

I.

— Ինչքն է պէտք սաղն ու շւին,
Բիւր լարերով սերտմ' ունիմ,
Անսիրտ փէտ են սաղն ու շւին,
Արնոտ, բոցոտ սերտմ' ունիմ:

— Էյ, ջան, Հա ջան, եմ սրտի մէջ
Վարդն էլ, աստղն էլ փէլք ունի.
Ջովեր, ծովեր, աչեր, պաչեր,
Ծիածանն էլ ծալք ունի.

— Էյ ջան, Հա ջան—եմ սրտի մէջ
Արար-աշխարհ տեղ ունի,
Յօղն ու առուն, շողն ու կաջճաղն,
Սէրն էլ, սուրն էլ ցուր ունի:

— Ես սիրամ՝ ունիմ քարայրի պէս
 Անշնի, անձէր — տանկ չ'կայ.
 Ամէն-մի շունչ, ձէն ու ծայտուն
 Սրտիս խորքում ձէն կուտայ...

1897 թ. 25 Սեպտեմբերի
 Քաղարան:

II.

Բարով քեզի, աղիղ եւոր,
 Ախր Թնչղ ինձ մոռցար,
 Գուն խեղճ չունիս, այ նամարդ,
 Գարդլու սրտիս մխիթար...

Եար ջան, երթանք մեր այգին,
 Նստինք ուռու շաքին,
 Ձէն-ձէնի տանք ու կանչենք
 Վարդ — Շիրազի բաջաթին:

Եարմայ, ինձի էսքան վախտ
 Հէջ չ'ջեղեցիր, այ բէբախտ,
 — Աղջի, դուն ես իմ գիւլը,
 Ես քու էրւած բլբուլը...

1891 թ. 4 Օդոստոսի:
 Աշտարակ:

III.

Էս ճամպէն ուր-մուր
 Աւ ծովի բոլոր կերթայ.
 Շուշան եարս ինձ թողեր է,
 Էն տղի Հետ ուր կերթայ...

Մէրիկ, թուրս մէջքս կապէ,
 Բեր կապուտ ձիս, շուտ Հեծնիմ,
 Քանի լուս է, լուսինն անց չէ,
 Էնոնց յետքից չուտ Համնիմ:

Ճակատ ճակտի էն տղի Հետ
 Կռիւ մտնիմ, բոց դառնամ.
 Զարդեմ, փշրեմ օտն ու գլուխը
 Խմեմ արունն ու Հովնամ:

Ա՛խ, թէ որ էն ինձի չաղթեց,
 Է՛հ, թող ըկնիմ չօլի մէջ,
 Թող արծիւը աչքերս Հանէ,
 Պէտ-առուծը սիրտս ուտէ...

Հէջ չէ Հեղմ՝ էլ եարիս կ'ասեմ—
 «Ա՛խ, Շուշան ջան, ուր կերթաո,
 Երկնուց աստղերն քեզի կուտամ,
 Էն տղի Հետ Հէջ չ'երթաո...»

1893 թ. 2 Սեպտեմբերի
 Պրազա:

IV.

Օխթը սարով Հեռու քեզնէն

Քու շւաքով եմ ապրում,

Օխթը տարով բաժան քեզնէն

Քու կարօտով եմ կրում...

Դարդիս դարման, եարիս մազլւնմ,

Ջան ու ջիգեար եարս ուր ա...

Դիշեր-ցերեկ զրկած քնից

Ծով է կարում աչքերս,

Բաւքի զարեպ ճամբորդիցմ՝

Խաբար առնիմ եարիցս...

Դարդիս դարման, եարիս մազլւնմ,

Թագ ու պսակ եարս ուր ա...

Օխթը տարի ծում ու պատով

Օր ու արև սեցուցի,

Բաւքի Մշու-Սուլթանի զօրքով՝

Իմ մուրազս տար ինձի...

Դարդիս դարման, եարիս մազլւնմ,

Թէ ու թիկունք եարս ուր ա...

1892 թ. 23 Մարտի.

Ապարան:

V.

Ախ, իմ ճամպէս մուր գնաց-

Անտակ ծովն զէմ առայ,

Վանխ, իմ սէրս անցաւ, գնաց,

Յետ կանչելու ճար չկայ...

Դումանն եկաւ, ծովը ծածկեց,

էն խաս Հաւքերն ուր կորան.

Դարդը եկաւ, սիրտս ծակեց,

էն ալ-վարդերս թնչ եղան.

Ախ, խաս Հաւքերն ծովում խեղդւան.

Ագուան վրէս կ'ղռայ.

Սերուս զառ-վառ վարդերն թնուման,

Բլբուլս անթէ կ'սգայ...

1897 թ. 24 Յուլիսի

Ա. Հաւիճոյ վանք:

VI.

Ամպի փէշով մէկ Հաւք անցաւ,

Անուշ կանչեց իր եարին.

Անուշ ձէնով սիրտս լցւաւ,

Եարս անցաւ կուժն ուսին:

էս աղբուրը գլգլալով

Քարփէն քարին կ'փուռի.

Ծով-ճամբորդ ազիզ գլխէդ

Մարմար կրծքիդ կ'փուռի:

Ա՛խ, նազիկ ջան, եղնիկ-աղջիկ,
 Նարին կուրծքդ թո՛ղ պագեմ,
 Սէրս բոց է, սիրտս խոց է.
 Պագդ դեղ ու դարման է:
 Չէ՛ որ, եար ջան, դաւրդ կերթայ
 Կուրծքդ նշխուն, շարմաղուն
 Հող ու մոխիր պիտի դառնայ,
 Զուր լինջու ես խնայում...:

1897 թ. 15 Յունիսի:
 Ս. Մարմաշէնի վանք:

VII.

Սուր սարերը ձունն է պատեր,
 Քամին փչեց՝ բո՛ւք-բորան
 Նշխուն հաւքերն շարան-շարքեր
 Տաք ու հեռու տեղ կ'երթան:
 Սիրուն հաւքեր, էդ սուր կերթաք,
 Ինձի մէնակ կ'իթողնէք.
 Էս ցուրտ ձմուռն, պատերի տակ
 Անտուն, անտէր կ'իթողնէք.
 Հէչ չէ՛ սիրտս էլ՝ խեղճ, վերաւոր
 Ձեզ հետ վերցրէք ու տարէք:
 Ա՛խ, մեր աշխարհն սառն է, սառուց,
 Զուրկ եմ սիրու արեւից.
 Եարս էլ ինձնից երես դարձուց —
 Զքւիմ, կորիմ էս տեղից...:

1897 թ. 27 Հոկտեմբերի
 Աղէքսանդրապոլ:

VIII.

Սիրուն Լօլան դաշտի միջին
 Վարդ ու նարգիս էր քաղում.
 Ալ-Թշերին, լնւ-չըթունքին
 Մէկ էլ նստաւ խէտ — մեղուն...
 — Նշխուն աղջիկ, հանգիստ թո՛ղ ինձ,
 Մի վախենանք — չէ՛մ կծում,
 Լաւիկ — միջին քու շըթունքից
 Անուշ մեղրը եմ ծրծում.
 Վառ վարդերից հարուր անգամ
 Ալ-Թշերդ բոյր ունի,
 Զառ նարգսից հազար անգամ
 Լալ-չըթունքդ մեղր ունի...»
 — Վայ ինձ, ինձնից բլր-բլր անգամ
 Մեղուն արք ու յարգ ունի...:

1895 թ. 15 Յունիսի.
 Նոր-Նախճան:

IX.

Ամպի մովը ընկաւ ծովը՝
 Շափաղ դիպաւ քարափին.
 Կ'շնկչնկաց անուշ հովը —
 Ես նստեր եմ ծովափին:
 Վաղեց մարալն դուման սարէն.
 Ծովում լողցաւ ու արծաւ,
 Վաղեց աղբէրս թշնամուն դէմ,
 Գիշեր անցաւ — չ'դարձաւ...:

Զան, մարանլ ջան, ասան, էս օր
 Աղբէրս ուր ա—չես տեսեր.
 Նեղն է ընկեր, Հասնեմ էնոր—
 Մէջքս դէմ տամ քանց ժէռ-լեռ...

1896 Թ. Յունիս.
 Երևան:

X.

— Հովերն առան սնր ու դարեր.
 Ամպերն ելան, մութն ընկաւ,
 Անգին մէրեկ, Հերեք չուսաս—
 Քու շողշողուն աստղն ընկաւ.
 Լաց, մէրեկ ջան, որ էլ չեմ գայ,
 Վէրքը սրտիս տուն չեմ դայ:
 Կաթիլ-կաթիլ ամպն է ցօղում
 Սև ու պղտոր երկնքէն,
 Մաղբիկ-մաղբիկ վէրքս է ծորում
 Իմ անգիւման սև սրտէն:
 Լաց, մէրեկ ջան, որ էլ չեմ գայ.
 Վէրքս խորն է, ճար չ'կայ:
 Անդութ կեանքում վէրք սաացայ
 Սրտանց սիրած ընկերէս.
 Անխիղճ կեանքում վէրք սաացայ
 Անուշ սիրած քուրեկէս...
 Լաց, մէրեկ ջան, որ էլ չեմ գայ,
 Աղեղ բալէդ էլ չ'կայ...

1895 Թ. 3 Մարտի.
 Ենա:

XI.

Արևն Հասաւ սարե գլխուն,
 Դար ու դաշտում լուս չըկայ,
 Հաւք ու թռչունք մտան խոր քուն,
 Ախ, ինձ Համար քուն չըկայ:
 Լուսնակն ընկաւ երթկից նետ,
 Կշեռքն ելաւ երկնքում,
 Զով Հովերն էլ մըթնշողէս
 Աստղերի Հետ են զըցում:
 Սիրուն աստղեր, անուշ Հողեր,
 Եարս ուր ա էս գիշեր,
 Պարզ երկնքն նշխուն աչեր,
 Եարես տեսա՞ք էս գիշեր...

Լուսը բացաւ, դուռը բացաւ,
 Ամպ ու դամպ է—թօն կուգայ.
 Ալ-ձին եկաւ, անտէր եկաւ,
 Եարս ուր ա, տուն չըկայ...

1891 Թ. 4 Դեկտեմբերի.
 Ս. Էջմիածին:

XII.

Մաճկալ ես—բեղարած ես,
 Առը շուռ տուր, շուտ արե,
 Ծովի պէս քրտնիկերս—
 Եղներն արձկի, տուն արի:

Կաթի սերը քաշեր եմ,
Դրեր եմ հովին— սառի,
Ալ-գոգնոցս փուեր եմ,
Արի, թառւան, թըռու, արի.

Տեղ եմ քցեր շւաքում,
Քամին կուգայ—զով կանի.
Լուսնի շողքն է մեր ծոցում,
Չափ տուր, չափ ան—չուստ արի.

Դատրած, բեղարած եար ջան,
Ամպերն ելան—դէհ, արի,
Բեղարած ջանիդ զո՛ւրպան,
Մտից թե ան— թէդ արի..

1893 թ. 24 Սեպտեմ.
Օրէր-Հօլց.

XIII.

Դարդս լացէք, սարի սմբուլ,
Ալւան— ալւան ծաղիկներ,
Դարդս լացէք, բաղի բլբուլ,
Ամպշող երկնուց զով-հովեր...

Երկինք-գետինք գլխուս մթնան,
Անտուն—անտէր կուլամ ես,
Եարիս տարան, ջանիս տարան,
Հոնդուր— հոնդուր կուլամ ես...

Ա՛խ, եարս ինձի հօնեց մտքէն,
Անճար թողեց ու դնաց,
Սրտիս սաւդէն—խորունկ եարէն
Անդեղ թողեց ու դնաց...

Դարդս լացէք, սարի սմբուլ,
Ալւան—ալւան ծաղիկներ,
Դարդս լացէք, բաղի բլբուլ,
Ամպշող երկնուց զով հովեր...

1893 թ. 23 Սեպտեմբ.
Լայպցիգ:

XIV

Շարան-շուրան ամպերն եկան,
Ա՛խ, մութն առաւ իմ ճամպէն,
Ո՛ւրտից կուգայի, ո՛ւր կերթամ—
Միտքս—շար, ու չ'իտեմ...

Էս ի՞նչ կսկիծ սիրտս ձեծիկեց,
Քո՛ւրիկ, քեզի՛հն հեռու կերթամ—
Վարդի փուշը սիրտս ծակեց —
Դարդը սրտիս խորնը կերթամ...

Սար ու ձորեր ձունն է իջեր,
Քամին պանջ-պանջ կ'փչէ.
Ես—մենակ եմ, ես—անընկեր,
Քամին ճակտիս կ'փչէ:

Փչէ քամի, դով քամի,
 Սիրաս դարդի ծով, քամի.
 Ես էրւումեմ, Հով էրան,
 Սիրաս մտի, դով էրան, ..

1897 թ. 20 Յունիսի.

Աղէքսանդրապոլ:

XV.

Նազան—աղջիկ, Շուշան—Շուշիկ,
 Տես մութն ընկաւ—Հովն ընկաւ,
 Յուցլալով աստղերն ելան,
 Քունն աչերիս ցած իջաւ.

Նշխուն ծաղիկ—սիրուն եղնիկ,
 Թող գերիդ ընկնիմ, քուն մտնիմ,

Ան, դով սարում, ետրի գրիում
 Լուիկ քունն ինչ անուշ է.

Հովը օրօք կը շշշայ,

Առուն երգեր կը շշնջայ.

Նազիկ, ծաղիկ—նուշիկ Շուշիկ,

Երնէկ քեզի. . . թուխ ծամերդ

Ծիծիպալով Հովն է տանում,

Սև դարդերդ ջուրն է տանում:

1892 թ. 28 Յուլիի.

Հառիճոյ վանք:

XVI.

Սև-աչքերէն շատ վախեցիք,
 Էն մութ, անձէր գեշեր է,
 Մութն ան Հ է, չարքեր շատ կան,
 Սև-աչքերը մի սերէ. . .

Տեսիմ սիրտս—արուն ծով է,

Էս չարքերը զարկեցին.

Էն օրւանէն դադար չունիմ.—

Սև-աչքերը մի սերէ. . .

1897 թ. 25 Հոկտեմբերի.

Աղէքսանդրապոլ:

XVII.

Եղնիկները մէջ-գեշերն
 Սուր ժէռերով անց կեցան,
 Մեղմիկ աշն փրփրած լճին,
 Լուիկ-մնջիկ անց կեցան:

Վան, էն աղէն սև-ձիւաւոր

Չարկեց, տարաւ իմ ետը.

Էնոր գրիում, դարշել ծոցում

Հոտաւ, որդնաւ իմ ետը:

Ես ինչ անեմ, ես ուր չըլեմ,

Բիւնիմ քօլ ու չօլերը,

Երնէկ մեռնիմ, դարդեց պրծնիմ,

Սիրտս ուտեն գէլերը:

ՀՀ Ազգային գրադարան



NL0685789

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

Ծախւում է Աղէքսանդրապօլում, պ. Գ. Սանոյ-
եանցի տպարանում. գինն է նոյն Հասցէով.

Александрополь, типографія Сапоянца.